ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «06» մայիսի 2025 թ.

ՀՐԱՄԱՆ № 135-Ա/1

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԵՎ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 13-ի N 149-Ա/Ք հրամանի N 1 հավելվածով հաստատված Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահին կից աշխատանքային խմբի աշխատակարգի 4-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2025 թվականի մայիսի 12-ին՝ ժամը 16:00-ին հրավիրել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահին կից աշխատանքային խմբի նիստ՝ հետևյալ օրակարգով.

1) գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու՝ բուհերից և գիտական կազմակերպություններից ներկայացված հայտերի գնահատում,

2) գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման՝ բուհերից և գիտական կազմակերպություններից ներկայացված հայտերի գնահատում,

3) միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում գիտական աշխատանքների հրատարակման ծախսերը փոխհատուցելու՝ բուհերից և գիտական կազմակերպություններից ներկայացված հայտերի գնահատում,

4) գործուղվող գիտաշխատողների գիտական գործուղման ծախսերը հայտատու կազմակերպություններին փոխհատուցելու նպատակահարմարության վերաբերյալ առաջարկության ներկայացում,

5) գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման հայտերը

ֆինանսավորման երաշխավորելու և ֆինանսավորման ծավալների մասին առաջարկության ներկայացում,

6) միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում գիտական աշխատանքների հրատարակման ծախսերը հայտատու կազմակերպություններին փոխհատուցելու նպատակահարմարության վերաբերյալ առաջարկության ներկայացում:

2. Նիստը նախագահելը և վարելը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Հարություն Սարգսյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ